



Saints Joachim & Anne Armenian Apostolic Church

Ա. ՅՈՎԱԿԻՄ ԵՒ ԱՆՆ
ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Pastor

Rev. Fr. DIRAN PAPAZIAN, Archpriest
Տ. ՏԻՐԱՆ Ա. Ք. Ք. Փ. Փ. Փ. Փ. Փ. Փ. Փ.

ՌԱՓՖԻ ՅՈՎՀԱՆՆԵՍԻԱՆ -ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ-

ծնեալ յերուսաղէմ Օգոստոսի 16ին, 1938, Առաքել են Տիրուհի Յովհաննէսեան ընտանեկան յարկին տակ: Մանուկ հասակէն իր ընտանիքին հետ փոխադրուած է հայաշտ Հալէպ, ուր եւ մեծցած է եւ կազմաւորուած է անոր ուսումնական կեանքը եւ նկարագիրը, անշուշտ մեծ բան պարտելով՝ իր բարոյական նկարագրի կերտումին մէջ՝ բարեպաշտօն իր ծնողաց:

Իր ուսման հանգրուանները եղած են ըստ հետեւեալին: Մանկապարտէզ՝ Հայկազեան դպրոց: Նախակրթարան՝ Էմմանուէլ Վարժարան: Բարձրագոյն կամ Երկրորդական՝ Հալէպի Ամերիկեան Քալէճ՝ -Ալէքքր Քալէճ-, ուրկէ շրջանաւարտած է 1956-ին: Ցանախած է նաեւ Հալէպի մէջ Կիրակնօրեայ Վարժարանին կանոնաւորապէս, ուրկէ ընթացաւարտ եղած է, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան վաւերացումով, Գէորգ Ներսոյեանի Տեսչութեան շրջանին: Իր ընթացաւարտութենէն վերջ, ուսուցչութիւն ըրած է 2 տարի Կիրակնօրեայ դպրոցին մէջ:

Քալենական տարիներուն անիկա Ատենապետ եղած է Հալէպի Հայ Ուսանողաց Միութեան որ կընդգրկէր Հալէպի բոլոր Երկրորդական Վարժարաններու ուսանողութիւնը:

Քալէճէն իր շրջանաւարտութեան տարին իսկ՝ ընտանեօք փոխադրուած են Պէյրութ: Այնուհետեւ զինք կը գտնենք լծուած աշխատանքի՝ Լիբանանահանայ գաղութի կեանքէն ներս, իր ուսանողական աշխատանքներուն առընթեր:

Ցանախած է Պէյրութի Ամերիկեան Համալսարան -էթ ե՛ս Պի-, լման 6 տարի, 1956-62, ուրկէ վկայուած է իբրեւ բժիշկ 1962-ին:

Այնուհետեւ Յ տարի եւս շարունակած է իր ուսումը նոյն համալսարանէն ներս, 1962-65, եւ մասնագիտացած է ներքին հիւանդութեանց մէջ:

Իր ուսանողութեան շրջանին, յատկապէս քժշկական մասնագիտացման տարիներուն, անիկա միացած է Զանասիրաց Երիտասարդական Միութեան եւ վարած է ատեն մը Ատենապետութիւնը նոյն կազմակերպութեան:

Անիկա հիմնադիրներէն եղած է 1964-ին, Հայ Երիտասարդաց Համալսարանական Ուսանողաց Միութեան -Հ.Ե.Հ.Ո Մ.- որ մինչեւ օրս կը շարունակէ իր գոյութիւնը:

12600 South Ridgeland Avenue Palos Heights, Illinois 60463 Office: 708-388-4940 Հար...

Շար... նախորդ էջեն...

Այս կազմակերպութիւնը վայելած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանաւորութիւնը: Գարեգին Վարդ. Սարգիսեան -այժմ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ-, իր դերը ունեցած է Միութեան կազմաւորման մէջ, որ այդ օրերուն Կաթողիկոսարանի կողմէ նշանակուած դասախոս էր Պէյրութի Համալսարանի Հայ Ուսանողաց, կրօնագիտութեան մարդկին մէջ, ըստ Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանանքին: Հարկ է ըսել սակայն որ այս միութիւնը՝ ոչ-յարանուանական, ոչ-կուսակցական՝ եւ մնացած է զուտ համալսարանական Հայ Ուսանողաց միութիւն մը, իր մէջ առնելով ամեն խաւի Հայ Ուսանողներ: Միութիւնը՝ ունեցած է մինչեւ 150 անդամ եւ իր օգտաշատ գործօն մասնակցութիւնը՝ բերած է ազգային կեանքին, զայն աշխուժացնելով՝ ժողովրդային լսարաններով, վիճաբանական ասուլիսներով, ազգային տօներու յայտագիրներու պատրաստութեամբ, օգտաշատ հրատարակութեանց մեկենասութեամբ՝ ~~նեսարժան~~ վայրերու արշաւախումբերով:

Ռաֆֆի 1965-ին ամուսնութիւն կը կնքէ Սիսակ եւ Արաքսի Վարժապետեան բարեհամբաւ ընտանիքի շնորհալի դստեր՝ Շողակի հետ, եւ նոյն տարին կը ժամանեն Ամերիկա:

1965--68 տարիներուն իր մասնագիտութիւնը՝ ներքին եւ աղիքային հիւանդութեանց վերաբերմամբ՝ կատարելագործած է Հափքինս համալսարանին մէջ, Պալթիմոր, Մերիլենտ:

1969-70 տարիներուն իր զինուորական պարտականութիւնը կատարած է հազարամասնով Ամերիկեան բանակին մէջ:

1970-ին նոյեմբեր ամսուն Յովհաննէսեան ամուլը հաստատուած է Մանսթըր, հնտիանա: Նոյն թուականէն սկսեալ ամբողջ 23 տարի անոնք՝ Տէր եւ Տիկին՝ Շիքակօյի Հայ գաղութի կեանքին բերած են իրենց ամբողջանուէր մասնակցութիւնը մեծ նուիրումով եւ տքնաշան աշխատանքով:

Այդ օրերուն զուգաղիպած է Ս. Յովակիմ եւ Աննա Հայաստանեայց Եկեղեցւոյ փոխադրութիւնը ի Փալոս Հայթց, իր նախկին տեղէն՝ Վէսթ Փուլմէնէն: Անոնք առաջին օրէն անդամակցած են Եկեղեցւոյ եւ իրենց գործօն մասնակցութիւնը բերած են նոր կեղրոնի եւ Եկեղեցւոյ շինութեան գործերուն մէջ, մեծագումար նուիրատութիւններ ընելով:

Համայնքային կեանքէն ներս Ռաֆֆի գործունէութիւններն են հետեւեալները:

Փալոս Հայթցի Ս. Յովակիմ եւ Աննա Հայց Եկեղեցւոյ թեմական Պատգամաւոր 15 տարի շարունակ, մինչեւ օրս:

Թեմական Պատգամաւորական ժողովի հիւրընկալ Յանձնախումբի Ատենապետ 1983-ին: Շար... յաջորդ թերթին վրայ



Saints Joachim & Anne

Armenian Apostolic Church

Ս. ՅՈՎԱԿԻՄ ԵՒ ԱՆԱ
ՀԱՅՅ. ԱՌԱՋԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Pastor

Rev. Fr. DIRAN PAPAZIAN, Archpriest
Տ. ՏԻՐԱՆ Ա. ՔՀՆՅ. ՓԱՓԱԾՆ, ՀՊՎԻ

Ծար...

Զ տարի վարած է թեմական Պատգամաւորական ժողովի Փոխ-Ատենապետութիւնը:

Իբրեւ Պատգամաւոր անդամ եղած է Ընտրողական Յանձնախումբի եւ Հարցերու Դասաւորման Յանձնախումբի:

Հայ Եկեղեցւոյ Հիմնադրամի Յանձնախումբին անդամ եղած է 4 տարիներ, 1983-87:

Ներկայիս Ս Ներսէս Աստուածաբանական Դպրոցի Խնամակալութեան անդամներէն է:

Թորգոմ Մանուկեան Սրբազնի Առաջնորդութեան 25-ամեակի Տօնակատարութեան Յանձնախումբի Ատենապետ եղած է Ալիսաւոր ատենախոս:

Հայ Եղեռնի 75-ամեակի Համազգային Յուշատօնի կազմակերպչական աշխատանքներուն գլխաւոր ղերակատարներէն եղած է, շրջանիս մէջ:

Միջարեւմտեան շրջանիս մէջ Յ խոշոր ժողովրդային հանգանակութեանց մղիչ ուժերէն հանդիսացած է իր Տիկնոջ Շողակի հետ միասնաբար, եւ այդ երեքին աննախընթաց յաջողութեան մէջ վճռական եղած է իրենց ղերը: Սոյն հանգանակութիւններն են ժամանակագրական կարգով - ա.) Երկրաշարժի հանգանակութիւն, բ.) Ղարաբաղի հանգանակութիւն, գ.) "Վինթըր Ռէսքիւ":

ծխական, համայնքային եւ թեմական մակարդակի գործերէն զատ՝ կան տակաւին ազգային գործունէութիւններ ըստ հետեւեալին:

Բարեգործականի անդամակցած է մօտ 30 տարիէ ի վեր իբրեւ բարերար անդամ: Քանի մը առիթներով Ատենապետութիւնը վարած է Ամերիկեան Ծիւղին Ընդհանուր ժողովներուն, վարած է նաև քանից Փոխ-Ատենապետութիւնը: 1992-էն ի վեր Բարեգործականի միջազգային վարչութեան անդամ նշանակուած է:

Արմէնիքն էսէմպլի-ին ``պօրտ``ին վրայ եղած է 1980-84:

``ՆԱԱՍՐ``ի Հայկական Ուսմանց եւ Գիտահետազօտութեան Ընկերակցութեան մէջ եղած է տարիներով իբրեւ անդամ եւ օգնած է նիւթապէս:

Վերջերս անդամակցեցաւ նաև Վարդանանց Ասպետներու Եղբայրակցութեան, անոր մէջ եւս կարելիութիւնը տեսնելով ազգին ծառայելու՝ տարբեր ծամբաներով:

Ասոնք բոլորը կը վկայեն Ռաֆֆիի վառ հայրենասիրութեան ինչպէս նաև անոր առաջնորդողի ծիրբերուն մասին:

Մեր ազգային շրջանակէն դուրս, օտար Ամերիկեան շրջանակներէ ներս եւս,

12600 South Ridgeland Avenue Palos Heights, Illinois 60463 Office: 708-388-4940 Ծար... Ետին

Շար... նախորդ է ջէն...

առեւտրական, տնտեսական եւ բժշկագիտական բնոյթով, Ռաֆֆի իր հեղինակաւոր ձայնը ունեցած է:

Կարեւոր է նշել նաեւ իր մեծ դերը Ամերիկեան պետական շրջանակներէ ներս, հայասէր ծերակուտականներու եւ քանկրէ մեններու ընտրապայքարին քերած իր շօշափեի նպաստով, շահելով զիրենք իբրեւ Հայ դատի պաշտպան: Իր հաստատած մտերմութիւնը նշանակալից է, եւ այս վերջնոյս յոյժ նպաստաւոր կեցուածքը՝ Հայկական հարցերու բարւօք լուծման ուղիով, մեծաւ մասամբ իր հաստատած մտերմութեան կը պարտինք:

Ռաֆֆին իր անձնուէր եւ երախտաշատ ծառայութեան համար քանիցս գնահատուած է՝ Հայութեան տարբեր հատուածներու կողմէ: Ասոնցմէ կարելի է յիշել հետեւեալ երկուքը:

1983-ին պատուուած է յատուկ կոնդակով իբրեւ ``Կիլիկիոյ հշխան'', Մեծի Տանը կիլիկիոյ Կաթողիկոսէն:

1986-ինան հոչակուած է իբրեւ ``Տարուոյն Մարդը`` Ամերիկեան Կիլիկեան Թեմական իշխանութեան կողմէ, Տիթրոյթի մէջ:

Սոյն կենսագրական քանի մը գծերը՝ կը յուսանք գաղափար մը կուտան մարդուն եւ իր գործին մասին;

ԱՅԱՀՐԱՆԴԻՐՔ

11 Օգոստոս, 1993

Փալոս Հայթց, հլինոյ

Պատրաստուած

Տ. Տիրան ԱԼ.ՔԻՆՅ. Փափազեանի
ձեռամբ